



«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1905

ԹԻՒ 8

ՂՊՏԻԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ  
 Ղպտինները եգիպտոսի բնակիչներն են, վասն զի 150,000է առելի չեն։ Իրենց եկեղեցին հին է, և իրենց ծէսերը որոնց ջերմեռանդութեամբ փարած են, կ'ըսուի թէ գտնուած ներուն մէջ ամէնէն հին ֆրիստոնէական ծէսերն են։ Անոնք հերետիկոս կը նկատեն Յոյն և Կաթոլիկ եկեղեցիները, բայց իրենց սուրբերուն կարգը կը դասեն Մարկոս Աւետարանիչը և եկեղեցւոյ նշանաւոր Հայրերէն շատը։ Եկեղեցւոյն գլուխն է Աղեքսանդրիոյ Պատրիարքը, որ ցկեանս կ'ընտրուի։ Ինչպէս է միւս Արևելեան եկեղեցիներուն մէջ, ամուսնացեալ մարդիկ կրնան քահանայ ըլլալ, բայց բարձրագոյն կարգի կղերը պէտք է որ ամուրի ըլլայ։ Մկրտութեան ատեն, որ մանչ տղուն կը մատակարարուի 40 օրուան եւ աղջկան՝ 80 օրուան եղած ատենը, մանուկը երեք անգամ կ'ընկղմուի ջուրին մէջ, կը հաւատան թէ չմկրտուած մանուկը կոյր կ'ըլլայ հանդերձեալ աշխարհին մէջ։

Եգիպտոսի միւս բնակիչներուն պէս Ղպտինները Արաբերէն կը խօսին, բայց իրենց եկեղեցական պաշտամունքը Ղպտիերէն լեզուն կը գործածեն, զոր չհասկնար ժողովուրդը։ Անիկա է հին եգիպտացւոց լեզուն անոր վերջին ձևով։ Ղպտինները Յոյն այբուբենին 24 զիրերով կը գրեն, նաև 7 ուրիշ գիրերով, Յունարէնին մէջ չգտնուած հնչումները ներկայացնելու համար։

Ղպտիններուն մէջ Ամերիկեան առաքելութիւն մը կայ 6,000 հազար դական անդամներով, և 25,000 անձերէ բաղկացեալ Աւետարանական

ժողովուրդ մը։ Անոնք քանի մը աղէկ դպրոցներ ունին 1,294 աշակերտներով։  
 Հոս դրուած պատկերը կը ցուցնէ Գահրէի Ղպտիական մայր եկեղեցւոյն ներքին կողմը։ Անոնց եկեղեցիները չորս մասերու կը բաժնուին։ Կայ Հէյքէյը, որ վարագոյրի մը ետեն է և չտեսնուիր ժողովուրդէն։ Այնուհետև

րովին հրաժարելու խնդրին շատ լաւ լուսարանութիւն մը կ'ընէ։ Աշխարհս կը գտնէք այնպիսի մարդերով լեցուն, որոնք կ'ըսեն ձեզի թէ պարտական չեն ոգելից ըմպելիներէ հրաժարելու ուխտատումս մը ստորագրելով զո՞հե իրենց ազատութիւնը։ Կ'ըսեն թէ բաւական խմած են երբեմն, բայց երբեք գինովցած չեն, ևն։



կայ քահանաներուն, երգեցող տղոց, ժողովուրդին երևելի մարդոց յատկացած մասը, և օտարականներունը որ վանդակորմով մը կը բաժնուի ժողովուրդին յատկացած մասէն։ Կիներու յատուկ մասը ետևի կողմն է կամ մէկ քովը, և վարագոյրով բաժնուած է եկեղեցւոյն մնացած մասէն։

—\*—\*—\*—

ԱՊՍՏՈՒԿ ՃԱՄԲԱՆ  
 Այն հաստատամիտ ծերունի Սկովտիացին, Տր. Արնոթ, խմտուքէ բոլո-

Տոբթորը կ'ըսէ, «Իրաւ որ դուք ստիպուած չէք ստորագրել։ Բայց մեր առջև կայ գետ մը որմէ պիտի անցնինք։ Անիկա լայն, խորունկ և սրընթաց է։ Ով որ անոր մէջ իյնայ, անշուշտ կը խղդուի։ Ահա այդ գետին վրայ կայ նեղ կամուրջ մը, լոկ գերան մը։ Ով որ ճկուն սրունքներ ունի և հաստատուն ջիղեր և ուղեղ, կրնայ ապահով քայլել անոր վրայէն։ Անդին կայ լայն, զօրաւոր կամուրջ մը։ Անոր հիմերը հաստապին դժայո-

են, լայն է այն կամուրջը, երկու կողմի վանդակորմերը բարձր են և հաստատուն: Ամէն մարդ կրնայ անկէ անցնիլ կատարեալ ապահովութեամբ, ձերք և տկարը, դեռահասը և կայտառը, դողդոջունը և դեղեկողը: Վտանգ չկայ հոն: Արդ, բարեկամ, կ'ըսես թէ ՚Իս ստիպուած չեմ՝ ստիպե երթալ, թող անկէ անոնք երթան որոնք չեն կրնար քայել այս գերանին վրայէն:՝ Ճշմարիտ է թէ դուն ստիպուած չես. բայց մենք գիտենք թէ եթէ այդ գերանին վրայէն քայենք, թէ և կրնայ ըլլալ որ ապահով անցնինք, շատ ուրիշներ ուրոնք մեզի հետեւելով պիտի քայեն անոր վրայէն, անշուշտ պիտի կորսուին: Եւ կը զգանք թէ աւելի աղէկ է կամուրջով անցնիլ. կատարող հոսանքի մը վրայ ձգուած և մէկ դեռանէ բաղկացած կամուրջէ մը անցնիլ վտանգաւոր է, բայց ապահով է բաղդատմամբ ոգեւից ըմպելի խմելուն հետ: Մարդ այս մասին որչափ աւելի ապահով զգայ ինքզինք, այնչափ աւելի քիչ կ'ըլլայ ուրիշներու ապահովութիւնը: Երբ մէկը անդունդին մէջ ինչապէս վրայ կը գտնուի, վստահ է թէ ինքն է միակ զգաստ մարդը իր բոլորտիքիններուն մէջ: Ոգեւից ըմպելիքէ բոլորովին հրրաժարումը ապահով է, և բոլոր աշխարհի համար անոր վրայէն անցնելու տեղ կայ:



ՁՈՒՐԻ ԺԱՄԱՆՅՈՅՆԵՐ

Ժամանակը ըսելու ճարտար շատ կերպեր հնարուած են, որոնք ժամացոյց կը կոչուին: Զուրի ժամացոյցին վրայ, որ աւաղի ժամացոյցին պէս կը բանէր, սապէս կը խօսի Անգղիերէն թերթ մը:

Ինչ ըսելիք ունիք ջուրի ժամացոյցին վրայ, Յոյն և Հռոմայեցի փոքրիկ տղաք ժամանակը ջուրի ժամացոյցի նայելով կ'ըսէին, Բեթլէհէմի մէջ մեր Տէրոջ ծնանելէն երկար ժամանակ առաջ: Շատ պարզ ջուրի ժամացոյց մըն էր գունտ մը, որուն ներքեւ ինկող մասը նորը ծակեր ունէր, այս ծակերուն մէջէն ջուրը կամաց կամաց դուրս կ'ելլէր: Երբ գունտը ճիշդ այնքան ջուր պարունակէր որ կաթիլ կաթիլ դուրս գալով կը պարպուէր մէկ ժամու մէջ, անոր մէկ երրորդը կը ցուցնէր քան վայրկեան, և մէկ չորրորդը՝ մէկ քառորդ ժամ: Շատ սիրուն ջուրի ժամացոյց մըն էր ապակի գունտ մը, որուն վրայ նշանակուած էին ժամեր և ժամերու մասերը ներ-

սը, ջուրին վրայ, կը լողար պղտիկ արձան մը ձողիկով մը, վրան ժամերու նշաններով: Քանի ջուրը ցածնար, ձողիկը վար կ'իջնէր և սյապէս կը ցուցնէր ժամը:




ԽՆՁՈՐ ԺՈՂՎԵԼ

Պտուղի տեսակներու շատութեան կողմանէ Օսմանեան կայսրութենէն աւելի նպաստաւոր երկիր չկայ: Մարդ պէտք չունի աւելի աղէկ նարինջներու քան Եաֆայի նարինջները, աւելի ընտիր ձմերուկներու և սեխերու՝ քան Գասապայիները, Տիարպէքի ինները և թուրքիոյ շատ կողմերէն ելածները, աւելի ընտիր խաղողի՝ քան Կարսոյ չավուչը. աւելի աշիւ ելակի՝ քան

ՊԱՐՏԱՆՈՐԻՉ ԴԱՍ ԼՈՂԱԼՈՒ  
Փէնսիլվանիոյ Համալսարանը լողալու գասը պարտաւորիչ ըրած է ուսանողներուն, խորհելով թէ ատիկա երիտասարդի մը կատարեալ դաստիարակութեան էական է, դպրոցական ընթացքին մէջ ուսման ունէ ճիւղին համար: Որովհետեւ այս համալսարանը աշխարհիս ամէնէն ընտիր լճակներն ունի լողալու համար, չսպասուիր որ հարկ ըլլայ ուսանողները լողալու դաս առնելու ստիպել, ֆրոֆ. Ճորճ Քիսթլըր որու յանձնուած են լողալու դաս առնող կարգերը, տղաքը ջուրին երեսը կը պահէ կրթութեան սկիզբները, երկար ձողի մը և ջուրին երեսը պահող կազմածներու միջոցաւ:



մայրաքաղաքիս մէջ Մայիս ամսուն մեր վայելածը, աւելի ընտիր նուշի և թուզի՝ քան այս օրհնեալ երկրին շատ կողմերը գտնուածները առատ և աժան: Բայց գալով ինձորին՝ մրցանակը պէտք է Ամերիկայի տալ: Մենք հոս ունինք ինձորներ և ընտիր խրձորներ, բայց տեսակներու, ճոխութեան և ախորժիւի համի և հոտի կողմանէ չեն կրնար հաւասարիլ Ամերիկայի ինձորներուն: Ամերիկա մեր երկրին մէջ մենք քանի մը տակառ ինձոր կը պահենք ձմեռուան համար: Եւ մեր տղայութեան հաճելի յիշատակներէն են այն ժամանակները երբ ձմեռ իրիկուններ կը նստէինք ջերմոցին շուրջը և ինձոր կ'ուտէինք պառկելէ ճիշդ առաջ: Ինձորները ձեռքով կը փրցուին ծառին վրայէն որպէս զի չմուսին, յետոյ տակառներով շուկայ կը տարուին, ինչպէս կը ցուցուի պատկերին մէջ:



Այս դասին նպատակը չէ լոկ լողալ սորվեցնել ուսանողին, այլ նաև կարող ընել զանիկա լողալ երկար հեռաւորութիւններու վրայ: Ոչ ոք երբեք սորված կը համարուի, մինչև որ կարող չըլլայ 200 ոտք երկայնութիւն ունեցող լճակին մէկ ծայրէն միւսը լողալ և նորէն ետ դառնալ լողալով: Փրոֆ. Քիսթլըր զարմանք կը յայտնէ գոյժ մանող այնքան բազմաթիւ անձներու լողալ երբեք չգիտնալուն վրայ: Խրոք, լողալու արուեստին այնչափ սոգէտներ կան, որ ուսուցչին օգնական մը տրուած է, և երկու վերատեսուչները զբաղեալ են ցերեկուան ամէն մէկ ժամուն մէջ, համբակները ձողերուն ծայրը բռնելու, ցնցելու, մինչ աշակերտները գորտերու շարժումներուն նմանը կ'ընեն: Լողալ սորվիլ ուղղորդներու նախ կը բացատրուին շարժումները, դեռ լճակին մէջ չմտնուած: Այնուհետև անոնց օգնութիւն կ'ըլլայ երբ հարկ է: Բայց

գլխաւոր նպատակն է սորվեցնել աշակերտներուն իրենց անձերուն վրաստակ ուրջի որ կարելի է, վասն զի անձին վստահութիւնը առաջին բանն է որ կը պահանջուի լողալու համար: Չենք գիտեր թէ արդեօք մարմնամարզի ուէ ճիշդ աւելի օգտակար արդիւնք կու տայ՝ քան լողալը, երբ կ'ուսուցուի ճարտար հրահանգիչներու ձեռքով:

**ՁԻՒՆԷ ԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՏՕՆԸ**

Գերմանիոյ Անտրէասպէրկ գեղին մէջ ձմեռը կ'ողւորի նոր գրասանքով մը այսինքն ձիւնի տօնով երբ բնակիչները, պզտիկ ու մեծ, կը մրցին իրարու հետ, և մրցանակ կ'ընդունին ձիւնէ շինուած ամէնէն հանճարեղ և գեղարուեստական բաներու համար: Անհատական և հանրային գետիններու մէջ ձիւնէ արձաններ շինելը գիտութեան կարգը անցած է: Ասոնք են իգական արձաններ, խումբեր, կենդանիներ, մեքենական ձևեր, և շատ ուրիշ բաներ զորոնք դժուար է ձիւնէ շինել: Դատաւորներուն գործն ալ երբեք դիւրին չէ գործերուն զանազանութեան և արտայայտելու հանճարին պատճառաւ: Անցեալ Մարտ ամսուն մէջ ամէնէն աւելի հանճարաւոր գործն էր փողոցի ելեկտրաշարժ երկաթուղւոյ կառք մը, որուն մէջ կը ցուցուէին մեքենավարը, կառուղիղը և ուղևորները: Մինչ դեռահասները մեծ ուշադրութիւն տուած էին այս տօնախմբութեան, մեծերն ալ անոնցմէ շատ վարչէին մնար զանկա վայելելու և անոր մասնակցելու կողմանէ: Ներկայ գրանուող միակ թշնամին արևն էր: Անոր պայծառ տաք ճառագայթները շատ մը քանդակագործներու գործերը աւրեցին տակաւին դատաւորները անոնց գործերն աչքէ անցնելու ժամանակ չգտած:



**ԱՊՐՈՂ ԱՄԷՆԷՆ ԲԱՐՁՐ ՄԱՐԴԸ**

Ուսթուս Մաքսօ, խաղախի զգեստներով լնտոնի փողոցներուն մէջ իր ցոյց դրուեցաւ մօտերս, իբրև աշխարհիս ամէնէն բարձրահասակ մարդը: Մեծ բազմութիւններ զարմանքով նայեցան անոր վրայ: Ասկէ քսանըջորս տարի առաջ ծնած է

Չարքոֆի մէջ, Ասիական Ռուսիոյ և Պարսկաստանի սահմանագլխին վրայ: Բարձրութիւնն է ինը ոտք և ութ երեք քառորդ մաս, այսինքն 4 1/2 կանգուն: Ծանրութիւնն է 164 քաշ, 23 մատնաչափոց օձիք կը գործածէ (կանգունը 27 մատնաչափ է) և մատնիին չըջապատը կէս մէծիտիյէ: Նոցի մը չըջապատէն մեծ է: Երկու մարդու կերածին չափ կերակուր կ'ուտէ: Սովորական դունէ մը անցնելու համար պէտք է որ ծուխ: Մասնաւորապէս իրեն համար շինուած անկողնի վրայ կը քնանայ, և դանիկա իրեն հետ կը տանի ճամբորդութիւններուն մէջ: Փողոցներուն մէջ պտտելու համար կը հեծնէ յատկապէս իրեն համար շինուած կառք

մը: Ազգին ճիշդ մարդահամար կատարուած չէ, բայց բնակիչներուն թիւը երեքէ մինչև չորս միլիոն կը համարուի:

Երկիրը բարձր է և դժուար է մտնել, և Հապէշները լաւ պատերազմիկներ են, ինչպէս իտալացիք փորձը առին քանի մը տարի առաջ: Ներկայիս մէջ երկիրը խաղաղութեան մէջ է, և կայսրը իր ժողովրդին յառաջդիմութեան կ'աշխատի, որուն մէկ քայլն է երկաթուղին որ սկսուած է ձկալովի ծովեղերեայ քաղաքէն մինչև Ատիս Ապպա: Մէնէլիք մասնաւոր պատուիրակութիւն մը զրկեց կ'պոլիս քանի մը ամիս առաջ և պատուով ընդունուեցաւ Ն. կ. վեհափառութիւն Սուլթանէն:

Հապէշաստանի Բրիտանիութեան դարձը պատահեցաւ Գ. Գարուն մէջ: Առաջին եպիսկոպոսը ձեռնադրուեցաւ Սթ. Աթանասիոսէ յամի Տեառն 330ին: Եկեղեցւոյ գլուխն է միշտ Ղպտի մը, Աղեքսանդրիոյ եպիսկոպոսէն ընտրուած և ձեռնադրուած: Հապէշաստանի մէջ 12,000 վանականներ կան: Մինչև մօտերս Հապէշաստանի մէջ գործածուած ստակն էր Աւստրիական արծաթ թալէրը: Բայց հիմա երկիրը իրեն յատուկ դրամն ունի: Այս պատկերը կը ցուցնէ Մէնէլիք կայսեր գլուխը, ինչպէս կ'երևնայ Հապէշաստանի թալէրին վրայ, որ իբր 12 դահեկան արծեք ունի:



մը, վասն զի փողոցի կառքերը չեն յարմարի անոր վիթխարի մարմնին:

**ՄԵՆԷԼԻՔ ԿԱՅՐ**

Հապէշաստանի Մէնէլիք կայսրը վաթսուներեկ տարեկան է, և կայսերական գահը բարձրացաւ 1889ին: Այդ թուականէն առաջ Շոայի թագաւոր էր: Շոա մէկն է չորս գաւառներէն որոնց կը բաժնուի Հապէշաստան: Իր միակ դաւակն է ազնիկ մը, որու որդին իշխան Յովհաննէս գահաժառանգն է: Ըստ Հապէշական աւանդութեան, Սաբայի թագուհին որդի մը ունեցած է Սողոմոն թագաւորէն որ էր Մէնէլիք Ա. և այժմու կայսրը անոր ցեղէն է: Հապէշաստանի մայրաքաղաքն է Ատիս Ապպա, 20,000 բնակիչով քաղաք

**ՏԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐ**

Գերմանիոյ շատ կողմերը երկրագործներուն դուստրները կը դաստիարակուին տեղէ տեղ փոխադրուող դպրոցներու մէջ որոնք կը փոխադրուին գեղէ գեղ տասնըվեցէն աւելի տարեկան աղջիկներու գործնական դասեր տալու, տնտեսութեան, խոհարարութեան, կերակուրի ընտրութեան, հաւ և արջառ սնունդանելու, բանջարեղէնի մշակութեան ու կարագ և պանիր շինելու: Աղբիւնքն այնպէս գոհացուցիչ եղաւ որ հիմա կ'ուղուի աւելցնել հիւանդապահութեան և հիւանդներու կերակուր պատրաստելու և կարելու և կարկտելու գասեր ալ: Ուսուցիչները, որոնք ընթացաւարտներ են անական գործի դպրոց-

ներու, և կառավարական քննութիւններէ անցած են, իրենց հետ կը կրեն եփարան շերմոց և կերակուր եփելու և արդուկելու վերաբերեալ զանազան գործիքներ: Դասերը կը նայուին դպրոցներու մէջ. շրջանը կը առնէ վեց շաբաթ, և ուսուցման ծախքը սյնքան քիչ է որ գրեթէ աղջիկ մը չմերժուիր:

ԵՐԵՎ ԳԵՇ ԱՌՆԵՏՈՒՐՆԵՐ

Անգամ մը վարժապետ մը ըսաւ թէ ով որ ճշմարտութիւնը կը գնէ, աղէկ առևտուր կ'ընէ. և հարցոց թէ աշակերտներուն մէջ կա՞յ մէկը որ Սուրբ Գիրքին մէջ պատմուած գէշ առևտուր մը յիշէ: «Ես կը յիշեմ», պատասխանեց տղայ մը, «Եսաւ ծախեց իր անդրանկութիւնը պնակ մը ապուրով» Երկրորդ մը ըսաւ, «Յուգա շատ գէշ առևտուր մը ըրաւ երբ իր Տէրը ծախեց երեսուն կտոր արծաթի: Երրորդ տղայ մը ըսաւ, «Մեր Տէրը կ'ըսէ թէ գէշ առևտուր կ'ընէ ան որ իր հոգին կը կորսնցնէ բոլոր աշխարհը շահելու համար»:

ՀՕՐԸ ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԵՆ ԶՕՐԱՅԱՆ

Վեր. Բ. Ճ. Գէմպըլ, Լոնտոնի Սիթի թէմպլը եկեղեցւոյ պաշտօնեայ, իր տղայութեան նեղ օրերը յիշելով կ'ըսէ.

«Կրնամ միտք բերել այն տուաւտը երբ արցունքներ կը զլորէին մօրս երեսէն վար, մեր նախաճաշին հացը կտրած ատենը, առանց իրեն համար բաժին մը պահելու, թէ և անիկա հացի վերջին նկանակն էր զոր կը բաժնէր: Ես զաւակներուն ամէնէն մեծն էի և ըսի, «Ինչո՞ւ կու լսա՞ մայր», և անոր պատասխանը օգնութիւն եղած է ինձի զօրանալու համար սոսկալի շատ փորձութիւններու մէջ: «Տղաս», ըսաւ, իր տժգոյն երեսը ինձի գարձը ներով, մինչ գեղեցիկ լոյս մը կը ցոլար աչքերուն մէջ, «հայրդ իր գործէն հանուած է սուտ խօսիլ չուզելուն համար: Ասիկա մեր ունեցած վերջին նկանակն է, բայց օրտիտ մէջ ուրախութիւն կայ, թէ պէտ արցունքները կը թրջեն երեսս, բայց անոնք ուրախութեան արցունք են, վասն զի կը մտածեմ թէ մեր որդին այնպիսի պատուական հայր մը ունի՞ որ կրնամ ըսել, Մեծցիր ու հօրդ պէս եղիր»: Հօրս այդ զոհողութեան օրինակը իմ առջև ունեցած եմ վսեմ շատ ժամերու մէջ, և երբ կը աեսնեմ այդ հանդարտ առաւօտը երբ ծնողքս

հաստատուն կեցան իրենց հաւատքին մէջ թէ և սովատանջ վիճակը մօտ էր անոնց, ինքզինքս զօրացած կը զգամ փորձութեան դէմ դնելու, դարձեալ լսելով մօրս խօսքը, «Մեծցիր ու հօրդ պէս եղիր: Երբ ես կը նայիմ և միտքս կը բերեմ այն դժուարութիւնները զորոնք կրեցինք իբրև ընտանիք, չեմ ուզեր փոխել այն ընտանեկան շրջանին հաւատքը, սրտի անդորրութիւնը և փոխադարձ ու սիրալիր յարգանքը բոլոր հարստութեան հետ զոր աշխարհ կրնայ տալ»:

ՓԱՓՈՒԿ ՎԱՅՐԿԱՆ ՍԸ

Անգղիացի երևելի վիրաբոյժ մը որ շատ բիրտ կը վարուի չափահասներու հետ, բոլորովին տարբեր մարդ մը կ'ըլլայ երբ հիւանդները մանուկ ըլլան: Այն ատեն հրեշտակի մը պէս սիրելի է:

Շատ չընեք այս ազնուասիրտ մարդը իր աքլուկ անկողինէն ելաւ կէս գիշերէն երեք ժամ ետքը խիստ առաւօտ մը կեղծմաշկէ տառապող տկարակազմ տղեկ մը դարմանելու համար: Շնչափողատութիւն մը կատարեց և ազատեց տղուն կեանքը, ժամանակը անցաւ և տղուն ընդհանուր վիճակը աղէկցաւ, բայց մնաց անհանգիստ ընող նշան մը: Տղան իր ձայնը չէր գործածեր: Երբ իրեն հարցում կ'ուզուէր, չէր ուզեր խօսիլ, այլ զլսի շարժումով կը հասկցնէր այն կամ ոչը: Վերջապէս վիրաբոյժը ճամբայ մը գտաւ: Առաւօտ մը խօսեցաւ իր յամառ փոքրիկ հիւանդին ներկայութեան: «Կը ցաւիմ որ անիկա ինձի չկրնար խօսիլ», ըսաւ վիրաբոյժը հիւանդապահին, «վասն զի ես վաղը Լոնտոն պիտի երթամ, և պէտք է գիտնամ թէ իրեն ձե՞ մը բերելու եմ թէ փող մը»:

Կարճ լուծիւն մը եղաւ: Վիրաբոյժը և հիւանդապահը կը սպասէին շունչերնին բռնած: Այն ատեն բարակ մատ մը վիրաւորուած կոկորդին դպաւ և մանկական ձայն մը ըսաւ, «Տոբե՛տոր, ինձի պղտիկ փող մը բեր»:

ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋՆՈՐԴՈՒՆԵՍԱԻ ԻՐ ՏՂԵՆ

Քանի մը տարի առաջ եղբայրս, կ'ըսէ Ամբրիկացի տիկին մը, Սփրինկ Ֆիլտ կը գտնուէր տխուր օր մը, կառախուսքին ճամբայ ելելէն իբր կէս ժամ առաջ: Երբ ժուռ կու գար կայարանին մօտերը, կոկիկ ճաշարան մը տեսաւ, և ներս մտաւ կէսօրուան ճաշն ընելու համար: Փայլուն տղայ

մը եկաւ հարցնել թէ ի՞նչ ուտել կ'ուզէ: Եւ մարդուն ճաշը բերելէն ետե նստաւ իր դասերուն պարագելու: Մեծարոյ մարդ մը որ յայտնի կ'երևէր թէ ճաշարանին տէրն էր, նստած էր կրակին մօտ, իր տկար ոտքերը աթոռի մը կռթնցուցած: Եղբայրս ճաշը լմնցնելէն ետքը մարդուն մօտեցաւ, և ըսաւ անոր. «Դուք փայլուն տղայ մը ունիք ձեր յաճախորդներուն ծառայելու համար»: «Այո, արդարև», ըսաւ մարդը ծնողական հպարտութեամբ, «ես չեմ կրցած ասոր պէս բարի տղայ մը վարձել: Անիկա որդիս է, և պատճառ եղաւ այս տեղը բանալուս. եթէ ոչ պիտի շարունակէի գինեատունը, որ տարիներով իմ ապրուստիս միջոցն եղած էր: Պատմեմ թէ ինչպէս: Օր մը տղաս դպրոցէն եկաւ սրտաբեկ, և երբ հարցուցի թէ ի՞նչ կայ, սկսաւ լալ, և չկրցաւ խօսիլ: Չինք բաւական ստիպելէս ետքը, ըսաւ թէ վագանձի միջոցին տղաքը իրարու հարցուցին թէ իրենց հայրերը ի՞նչ գործ կ'ընեն: Տղոց մէկը ըսաւ թէ իր հայրը կապարագործ է, ուրիշ մը ըսաւ թէ հիւսէ, և երբ կարգը իմ տղուս եկաւ, և ըսաւ թէ իր հայրը գինեպան է, տղոց մէկը ըսաւ, «Ասիկա ամէնէն ստորին գործն է»: Ի՞նչ տեսայ թէ՞, ըսաւ տղաս, ամէնն ալ նոյն զգացումը յայտնեցին: Ասիկա սոսկալի կերպով ամչուց զիս ուրեմն, հայր, եթէ միայն թողուք գինեատունը, բոլոր իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ քեզի օգնելու»: Ասոր վրայ վիզս վաթթուեցաւ և հեկեկալով խնդրեց որ այդ գործը թողում: Վերջապէս հետևանքն այն եղաւ որ ծախեցի գինեատունը: Հիմա այնքան ստակ չեմ յաճիր որքան կը զահէի խմելիք ծախած ատենս, բայց ունինք երջանիկ տուն մը: Կինս կրնայ օգնել այս գործին մէջ, վասն զի պատուաւոր մարդիկ հոս կու գան ճաշել, Բայց առաջ չէի ուզեր որ անիկա գինեատան կողմերը գտնուի, վասն զի այն ատեն խօսակցութիւնները ստորին և անվայել էին գինեատան մէջ: Տղաս իր խօսքին հաւատարիմ գտնուեցաւ: Աւելի բարի տղայ մը չէի կրնար խնդրել Աստուծ մէջ»:

Եղբայրս մարդուն շնորհակալ եղաւ այս պատմութիւնն ընելուն համար, և յաջողութիւն մաղթելով մեկնեցաւ:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դր. արծաթ կանիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր Ճ. Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՊՈ ՊՈՆԱՆՈՆ  
Ճինճանճըլար Եօզուշու, Ամերիկան Խան